

ՄԻ ԷԶ ՀԱՅ ՀԻՒ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայկական տպագրությունը Կոստանդնուպոլիսում հաստատում հիմքերի վրա դրվեց 1690-ական թվականներին։ Այդ գործում վճռական դեր կատարեցին երկու խոշոր տպագրիչներ՝ Գրիգոր Մարզվանեցին և Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին։ Նրանք ոչ միայն մշտական գործող հայկական տպարաններ հիմնեցին, այլև մեր պատմության ժամանակներից մեկում՝ ժմ դարսի առաջին կեսերում, տպագրությամբ բազմացներով, հայ ժողովրդի սեփականությունը դարձրին նրա հոգեկան անընկճելի ուժն ու կորովն արտահայտող, ոգևորող ու ազդային ինքնուրույնության կողող գրական մի շարք կոթողներու Մարզվանեցին տպագրեց Զենոր Գլակ ու Ազաթանգեղոս, Աստվածատուրը՝ Գրիգոր Նարեկացի, Դավիթ Անհաղթ, Տաթևացի, Բացի դրանից, նրանք մեծ ծառայություններ ունեն հայ գրքի տպագրության արվեստի զարգացման ասպարեզում։

Սակայն այդ երկու տպագրիչների կյանքի ու գործունեության մասին գեռևս կան որոշ շփոթություններ։

Շփոթության ողջ մի շարան է ստեղծված հատկապես Աստվածատուր Կոնստանդնուպոլսեցու շուրջը։ Նրա անվան առաջին անգամ հանդիպում ենք 1698 թվականին Կոստանդնուպոլսում լուս տեսած «Տաղարան վայելու և գեղեցիկ» գրքում, իբրև Գրիգոր Մարզվանեցու ընկերակից տպարանատիրոջ՝ Ըստ Զարբհանալյանի նկարագրության, այդ

գրքի տիտղոսաթերթում գրված է. «Ի տպարանի ձեռամբ Գրիգորի Մարզվանցոյ, և Աստվածատուր Կոստանդնուպոլսեցոյ»¹։ Հետեւյալ՝ 1699 թվականից Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին հանդես է գալիս արդեն միայնակ և շարունակում իր տպագրական գործունեությունը մինչև 1740-ական թվականները։ Իր տպագրած գրքերի տիտղոսաթերթերում և հիշատակարաններում ասում է, որ ինքը կոստանդնուպոլսեցի իոնք կամ պարոն Կարապետի որդին է (մայրը՝ Մարիամ), իրեն անվանում է Աստվածատուր Կոստանդնուպոլսեցի, շատ հաճախ՝ Մահամ- Աստվածատուր, մերթ էլ՝ Աստվածատուր դպիր։ Սկսած 1720 թվականներից, Աստվածատուրի գործակիցն է իր որդի Հովհաննեսը։ Հոր մահից հետո, տպագրության գործը շարունակում է այս Հովհաննեսը, իր որդի Կարապետի հետ։ 1750 թվականին լուս տեսած Բաղդասար դպիրի «Եահաւետ»-ի հիշատակարանում կարդում ենք. «Ի տպարանի հանգուցեալ Մահամ- Աստվածատուրի և որդույ նորին՝ գիտնոց ծառայ տիրացու ծօհաննիսի»։ Երախտագետ որդին մինչև իր կյանքի վերջն էլ գրքերի տիտղոսաթերթերի վրա պահում է հոր անունը՝ «Ի տպարանի

¹ Այս հրատարակությունից չկա երեանի, Թրիլիսիի և Բաքվի գրադարաններում։ Տեղեկությունը գերցընե ենք Գ. Զարբհանալյանի «Հայկական մատենագիտութիւն» աշխատությունից, տպ. Վենետիկ, 1883, էջ 658.

մահտեսի Աստուածատուրի»: Հովհաննեսը, իր Կարապետ որդու հետ, տպագրում է բազմաթիվ գրքեր և տպարանը կարողանում է պահել մինչև 1770-ական թվականների վերջը, որից հետո այն անցնում է ուրիշների ձեռքը: Այսպիսով, Աստվածատուր Կոստանդնուպոլսից հարատևում է շուրջ 80 տարի:

Այս է Աստվածատուր Կոստանդնուպոլսիցու և նրա ժառանգների տպարանական գործունեության համառոտ ուրվագիծը: Ահա այս Աստվածատուրին թեռողիկը, մի թյուրիմացության հետևանքով, որի մասին կխոսվի ստորև, անվանում է Աստվածատուր Ապուշիսցի, ընդգծելով, թե նրա և նրա գերդաստանի տպարանը գոյություն է ունեցել «մեկ ու կես դար»²:

Այս թյուրիմացությունը հիմք ընդունելով, Գ. Ասոնյանը գրում է. «Հայ տպագրության պատմության մեջ Աստվածատուր Ապուշիսցին եղակի անձնավորություն է այն տեսակետից, որ նրա հիմնած տպարանը՝ իր գոյությունը շարունակում է ավելի քան 150 տարի, ժառանգաբար անցնելով նրա որդիներին, թոռներին և ծոռներին՝ հերթականությամբ»³:

Նույն այս սիալները կրկնվեցին նաև 1962 թվականին, հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին և Հայկական տպագրության 450-ամյակին նվիրված հոդվածներում ու զեկուցումներում:

Թեև մեր բանախության մեջ վաղուց ի վեր բացահայտված են այս անձտությունները, բայց դժբախտաբար մինչև այսօր էլ մնում են անլսելի:

Ինչ վերաբերում է Աստվածատուր Ապուշիսցի անվան, ապա այդ անվամբ ոչ տպարանատեր, ոչ էլ տպագրիչ է եղել: Իսկ ինչպես է այդ անունը այնքան հաստատուն կերպով մտել մեր տպագրության պատմության մեջ: Այս Հարցին պատասխաննելու համար Հարկավոր է ծանոթանալ մեկ ալլ տպարանի գործունեության:

1760-ական թվականներին Ակնցի Հովհաննեսը և Հակոբը Կոստանդնուպոլսում բացում են մի նոր տպարան: 1766 թվականին այստեղ տպագրվում է «Գիրք վկայության Մրրոյ Մարինէ կուտին»⁴: 1767 թվականին

2 Թիոդիկ, «Տիպ ու տառ», Կ. Պոլիս, 1912, էջ 56.

3 Գ. Ասոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Բ տպագրություն, Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 131:

4 Այս հրատարակությունից նույնպես չկա Երևանի, Թրլիսիի ու Բարվի գրադարաններում: Տեղեկությունը վերցրել ենք Թեռողիկի և Գ. Ասոնյանի աշխատություններից:

տպագրում են եփրեմ Խորի Ասորու «Աղօթագիրք»-ը, 1768—1769 թվականներին՝ Պաղտասար դպրի Տաղերը, «Շարական», «Աւետարան», «Մաղկոցիկ»: Այս գրքերի հիշատակարաններից երեսում է, որ տպարանը պատկանել է Ակնի Ապուշիսցի գյուղացի Աստվածատուրի որդի Հովհաննեսին և Ակնցի Սոխիկովի Սարգսի որդի Հակոբին: Այս երկու կուռնուններից հետո հիշվում է նաև Հովհաննեսի որդի, գրածույլ և գրաշար Պողոսը:

Թե ի՞նչ առնչություն է ունեցել Հովհաննեսի հայր՝ Աստվածատուր Ապուշիսցիին իր որդու և նրա ընկերակցի հիմնած տպարանի հետ, պարզ երեսում է 1769 թվականին նույն տպարանում հրատարակված Ավետարանի հիշատակարանից: Այդտեղ ավում է, որ գիրքը լույս է տեսել «... Արդեամբք և զոյիւք ըստ բնականին Ակնցի և ըստ ծննդականին՝ յԱկնա գիւղիցն Ապուշիսցի մահանեսի Աստվածատուրի կողելու...»⁵:

Հարունակությունից տեղեկանում ենք, որ Աստվածատուրը, մեծ հարստության ու կալվածների տեր ծերունի է արդեն և սույն Ավետարանը տպագրելու համար ձուկել է ավել սովորականից ավելի մեծադիր (14 կետաշափի) տպագրական տառեր, որպեսզի իր նման ծերերի համար ընթիրոցելը հեշտ լինի: Այսուհետև հիշելով Աստվածատուր Ապուշիսցիու ամբողջ գերդաստանի անդամներին, տպագրողներն ավելացնում են. «Իսկ յետքան զամեննեսեան՝ թախանձագին բանիւք պաշտեմք զհաւատացեալսդ ի բանն ամենաարի յիշել ի բարին և զտպագրօզն հոգեկեցոյց Մրրոյ Աւետարանիս: Այսինքն զվերյագրեալ մահանեսի Աստվածատուրի որդի Յօհաննէսու՝ և Ակնցի հանգուցեալ Սարգսի որդի Յակոբս, Հանդերձ ծնողովքս մերովք: Ընդ որս և զգեստայոյ որդեակն նորին Յօհաննիսի զՊօղոսն մտերիմ, որ ըստ կարի իւրում յոյժ աշխատեցաւ թէ՝ յօրինելին ըստ կերտողի նորաշէն գրոցս, և թէ՝ ի շարելն և ի ցրուելն զկապարեայս»⁶:

Ուրեմն, ծերունի Աստվածատուր Ապուշիսցին մի մեջենաս է, որ հոգու փրկության համար հոգացել է, Ավետարանի տպագրության ծախսերը: Հայ տպագրության պատմությանը ծանոթ են շատ անուններ, որոնք նույն այդ մզումներով հոգացել են այս կամ այն գրքի տպագրության ծախսերը, բայց նրանցից ոչ մեկը տպարանատեր կամ տպագրիչ չի անվանվել:

Հուտով Հովհաննեսի բնկերակից Հակոբը հեռանում է ասպարեզից: 1769 թվականից

5 «Աւետարան», Կ. Պոլիս, տպ. Հովհաննեսի և Հակոբի, 1769, էջ 460:

6 Նույն տեղում, էջ 462—463:

մինչև 1779 թվականը այս տպարանից լույս տեսած գրքերի շնորհ հանդիպում: Իսկ այս թվականին տպագրված եփրեմ Ասորու Աղոթագրի վրա իբրև տպարանատեր նշված են Հովհաննեսն ու իր որդի Պողոսը միայն:

Հակոբը տպարանից հեռացել էր դեռևս 1769 թվականին, իսկ Պողոսը այդ տարին վրաց Հերակլ թ թագավորի կողմից հրավիրվել էր Թթիլիսի՝ կատարելագործելու վրաց տպագրական տառերը: Վերադառնալով Վրաստանից, Պողոսը մինչև դարավերջ հետ, և այսուհետև միայնակ, շարունակում է տպագրական գործը: Պողոսից հետո այս գերդաստանի տպագրական գործունեությունը շարունակում են նրա ժառանգները: Թե որքա՞ն է տեսում այս գերդաստանի տպագրական գործունեությունը՝ դեռևս հանգամանորեն ուսումնասիրված չէ:

Թեղողիկը այս Հովհաննեսի հորը՝ Ապուշիսի Աստվածատուրին շփոթելով Աստվածատուր Կոստանդնուպոլիսուցու հետ, տեղի է տվել այն թյուրիմացությանը, թե իբր եղել է Աստվածատուր Ապուշիսի տպարանատեր-տպագրի և թե նրա ու իր ժառանգների տպագրական գործունեությունը տեսել է 150 սարի:

* * *

Հետագա անճշտություններից խուսափելու համար, անհրաժեշտ ենք համարում կանգառնել մինչև այժմ հայ տպագրության պատմության անձանը մնացած մենք ուրիշ տպարանի գործունեության վրա ևս:

Վերևում տեսանք, որ Հովհաննես անունն են ունեցել թե՛ Աստվածատուր Կոստանդնուպոլիսուցու տպագրի որդին և թե՛ մինչև այժմ սիալմամբ տպարանատեր համարված Աստվածատուր Ապուշիսուցու տպագրի որդին: Նրանցից առաջինը իր Կարապետ որդու հետ հոր տպարանը շարունակել է կանգուն պահել մինչև 1770-ական թվականների վերջերը, մյուսը՝ նախ իր ընկերակից Հակոբի և Պողոս որդու հետ, ապա միայն վերջինիս հետ, տպագրությամբ է զբաղվել մինչև դարավերջ⁷:

7 Միմյանց հետ շփոթելով Աստվածատուրներին ու նրանց որդիներին, Գ. Անդյանը իր վերոհիշտալ աշխատանքային 138-րդ էջում է: «Հովհաննեսը հոր մահից հետո տպարանի տնօրինը դառնալով՝ իր անվան հետ համախի հշատակում է և որդու՝ Կարապետի անունը, որպես «շարուղն» ու ցրուղն արճընեայ զրոց»: Բայց թե ինչո՞ւ հետեւյալ հրատարակությունների մեջ այնքան ոչ մի անգամ չենք պատահում այդ Կարապետին և նրա փոխարեն հայտնի է զառնում նրա եղբայր (ընդգծումն է մինչև 2-ը. Գ.) Պողոսը, այդ մեջ համար մնամ է մութա:


Բայց տպագրի Հովհաննեսները միայն այս երկուսը չեն: Կա մի երրորդ տպագրի Հովհաննեսներ են: Ի տարբերություն Աստվածատուր Կոստանդնուպոլիսուց որդի Հովհաննեսի, որը մեկ-մեկ է հիշատակարաններում իրեն «Հնչին» տիտղոսով որակում, այս Հովհաննեսը իրեն համարյա միշտ անվանում է «Հնչին Յովհաննէս», իսկ հիշատակարաններում սկզբի շրջանում՝ «սարկավագա ապա՝ «տիրացու»: Այս տպարանատերը Զնշին Հովհաննեսի հոր անունը Ղազար է, մորը՝ Հովիսիմեն: Սա նույնպես ունի մի զավակ, որի անունը Ստեփան է: Զնշին Հովհաննեսը գործել է 1746-ից մինչև 1750-ական թվականների սկզբները: 1749 թվականին հրատարակված Արսեն դարի «Գիրք սահմանաց յոգնադիմի իրողութեանց»-ի հիշատակարանում կարդում ենք. «... Ցիշեսչիք և զտպագրօղ սորին զնչին մահտեսի Յօհաննէս, անուամբ և եթ Սարկաւագս. և զծնօզան իմ զմահտեսի Ղազարն. և զմայրն իմ զշոփիսիմէն. և զորդեակն իմ զտիրացու Ստեփանն...» (էջ 528): Բացի այս գրքից, Զնշին Հովհաննեսը տպագրել է նաև Ներսես Շնորհալու «Յիսուս որդի»-ն և Գրիգոր Մագիստրոսի «Տաղասացութիմ»-ը (1746 թ.) մեկ գրքով, Հակոբ պատրիարք Նալլանի «Հոգեցահ»-ը (1746 թ.), Աթանաս Աղեքսանդրացու «Գիրք պատասխանական»-ը (առանց տպագրության տեղը և թվականը ցույց տալու), «Պղնձէ քաղաք»-ը (1749 թ.), Պողոս Տարոնացու «Թուղթ ընդդէմ Թէսփիստայ» (1752 թ.) և այլն:

* * *

Շատ ավելի քիչ է ուսումնասիրված Գրիգոր Մարգվաննեցու գործունեությունը: Հայտնի է, որ 1684 թվականին Կոստանդնուպոլիսի գալով, Գրիգոր Մարգվաննեցին, Բաղեշի զորքոցի ցրկելուց հետո, Կոստանդնուպոլիս հաստատված Սարգիս վարդապետի մոտ սովորում է ծաղկարարության և փորագրության արվիստը: Այնուհետև ձեռք բերելով երեմիա Ձենեպի Քյոլյությանի երկու գրքույկ հրատարակելուց հետո⁸ դադարած տպարանը, վերակառուցում է այն և 1698 թվականին, Աստվածատուր Կոստանդնուպոլիսու լնկերակցությամբ, հրատարակում վերը հիշատակված «Տաղարան»-ը: Մինչև այժմ այդ

8 Տե՛ս Լիս, «Հայկական տպագրություն», Բ, մասն Ա, Թիֆլիս, 1902, էջ 143:

9 Մի հատված Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմից և իր իսկ հորինած տաղերը երուսաղեմի մասին «Տնօրինականք» խորագրով, 1686—1687 թվականներին:



Գրիգոր Մարզվանեցու 1706 թվականին հրատարակած «Յայսմատըր»-ի տիտղոսաթերթը

Երկուսի կողմից համատեղ հրապարակված ուրիշ գիրք չի հայտնաբերել միայն 1699 թվականին Աստվածատուր Կոստանդնուպոլսից արդեն առանձին հրատարակում է մի «Շարական», այնուհետև հաջորդաբար «Նարեկ» (1700—1701 թ.թ.), «Մաշտոց» (1704 թ.), «Տօնացոյց» (1703 կամ 1705 թ. թ.), «Յայսմատըր» (1706—1708 թ. թ.)¹⁰; Այդ ամբողջ ժամանակի ըն-

¹⁰ Մինչև վերջերս էլ հայ տպագրության մեջ Մարզվանեցու և Աստվածատուրի սկզբնական շրջանի համատեղ գործունեությունը բացահայտված չէ, իսկ նշված այս հիմք գորեքից հայտնի էին միայն երկուսը՝ «Շարական»-ի մասին տեղեկություններ է տալիս Շ. Շահնազարյանը 1962 թվականին «Բանքեր Մատենադարանի» և 5-ում տպագրված «Մատենադարական նորություն» հաղորդագրության մեջ, իհարկե, Աստվածատուր Կոստանդնուպոլսից անվանելով Աստվածատուր Ապուլիսցի; Մնացած երկու գորեքը հայտնաբերել են 1962 թվականի վերջերին Հայկական ՍՍՀ Ալ. Մասնիկյանի անվան պետական գրադարանի Հայ ժամա-

թագրում, Մարզվանեցին որևէ գիրք չի հրատարակում և միայն 1706 թվականին տպագրում է «Յայսմատըր»-ն ու մի «Խորհրդատետր»: Վերջինիս տիտղոսաթերթի վրա գրված է. «Ի նորակերտ տպարանի՝ Գրիգոր գպրի՝ Մարզվանեցո», իսկ հիշտակարանում՝ «Ի վախճանի աստուածային պատարագամատուցիս այսորիկ, աղաշեմ անմեղադիր ինինել խրթնութեան նորատիպ տառիս և ղեռաշչեն գործարանիս, որովհետև ամենայն իրաց սկիզբն գործարին է»: Ինչպես տեսանք, այդ նույն թվականին «Յայսմատըր» է տպագրել սկսում նաև Աստվածատուր Կոստանդնուպոլսիցին:

Միևնույն քաղաքում, միմյանց հետ երեխմնի գործակցած երկու տպարանատերերի միաժամանակ «Յայսմատըր»-ի պես մեծածավալ ու հսկայական միջոցներ պահանջող գրքի հրատարակությունը շատ արտակարգ երևույթ է հայ տպագրության հնագույն շրջանի 300 տարիների համար: Այդպիսի երկու-երեք դեպք է միայն հայտնի, որոնցից մեկը դարձյալ այս երկուսի կողմից 1713 թվականին հրատարակված Հովհաննես Մրգուկի «Դաւանութիւն հաւատոյ» գիրքն է: Այս հանգամանքը ցուց է տալիս, որ գործունենք երկու տպարանատերերի բացահայտ մրցակցության հետ:

Իսկ ի՞նչ եղավ երեխմնի գործակիցների 1698-ին հիմնած համատեղ տպարանը և ի՞նչո՞ւ է 1706 թվականին տպագրած «Խորհրդատետր»-ի մեջ Մարզվանեցին իր տպարանը անվանում «նորակերտ», այնինչ Աստվածատուրը իր տպարանի մասին խոսում է իրքի վաղուց ի վեր գոյություն ունեցող հիմնարկություն:

Մեր բանասիրության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե Մարզվանեցու և Աստվածատուրի միմյանցից բաժանվելու պատճառը «Տաղարան»-ի տպագրությունից հետո, ենիշերիների կողմից հայկական այդ նոր տպարանի ավերումն է: Այդ դեպքում, ինչո՞վ բացատրել երկու գործակիցներից մեկի՝ Մարզվանեցու ութամյա լուսիթյունը և մյուսի՝ Աստվածատուրի գործունեության շարունակվելը հաջորդ իսկ տարվանից: Տպագրության սկզբնավորման շրջանում մեկ-երկու տարին մեկ գիրք հրատարակելը բացառիկ հաջողություն էր: Այդ է վկայում հենց նույն Աստվածատուրի տպարանի ամենածաղկուն շրջանի գործունեությունը: Տպարանը ավերվելուց հետո, գծվար թե հնարավոր լիներ հաջորդ իսկ տարին գիրք հրատարակել: Բացի դրանագիտության բաժնի աշխատողներ Հ. Դավթյանը, Ն. Ոսկանյանը և Ք. Կորկոտյանը, հայերեն հնատիպ գրքի մատենագիտություն կազմելու աշխատանքի ընթացքում:

նից, ու Աստվածատուրը, ու էլ Մարգվանեցին իրենց հիշատակարաններում որևէ ակնարկ չեն անուած 1690-ական թվականների իրենց համատեղ տպարանի ավելքման մասին: Այս փաստերից ելնելով պետք է ենթադրել, որ երկու գործակիցների տպարանը ու թե ավելի է նրանցից մեզին՝ Աստվածատուրին: Տպագրության պատմությունը լի է նմանօրինակ դիպերով: Հանրահայտ է, օրինակ, հենց տպագրության արջալույսին միծ զյուտի հեղինակ Գուտեմբերգի և նրա գործակից Ֆուտարի միջև ծագած վեճն ու գատավարությունը, որի հետևանքով ու միայն տպարանը, այլև արդեն տպագրված Աստվածաշունչը անցնում էն Ֆուտարին: Տպարանը ուրիշներին անցնելու մասին պարզորոշ ասվում է Մարգվանեցու «Յայսմատուրք»-ի հիշատակարանում: «Յորժամ զայս ամենայն կաղապարք բազում աշխատանօք շինեւլ հաստաեաց ձեռք իմ... Պատահեաց ինձ երկոց ոմանց բազում վնասս՝ զոր ու գրեցից զանուանէ նոցին: զի մի յամօթ կրեսցեն ի լուղաց ի ասդէն: և կամ վատ անուն ընկալցին ի մէջ ազգաց: զի յաղագս բազում ազահութեանց իւրեանց՝ յափշտակեալ դարանագրծութեամբ ի ձեռաց իմոց զամենայն տպագրեանս իմ ծաղկագրով և այլն ամենայն, և ոչ մի ինչ մաս մի բնաւ ու ընկալայ: ... և մնացի անյոյս՝ և յունայն ի ընչից և դրամից»¹¹:

Ինչպես սովորաբար, այս դեպքում ևս Մարգվանեցու տպարանը ուրիշներին (իմայր գործակիցներին) անցնելու պատճառը նրա նյութական միջոցների սղությունն է եղել: Արդար բողոքով և անկեղծ հովվմունքով գրած իր հիշատակարանում, նա մի քանի անգամ անդրդառնում է իր ընչազուրկ վիճակին, պատմում օր ու գիշեր գատարկ ձեռքերով միայն թափված բրտանաշան աշխատանքի, ճիգ ու ջանքերի, տառապանքների մասին, որոնք ի վերջո հաջողությամբ են պսակվում: Շե դարձեալ կրկին և ևս յուստրեցի զիս առ Աստուած՝ յանձն իմ անդրէն ի նույն դառնալը: Աստանօր սկիզբն արարի՝ նորագրել արհեստ տպարանիս: ... Թէ պետ երկուասան ամ աշխատեալ իմ, զի շորացեալ ի շրատութենէ գոյից ըստ պիտոյից մարմնոյ: Եւ եղէ որպէս խեցի: և կամ ճընճուկ միայն ի տանիս՝ որդովք իմովք: Տեսցեն ամենայն ոք ի փառողաց զէութիւն բանին վասն անկ ըութեան իմ: Զի անհնարին գործ է առանց դրամի յառաջացուցանել զայս»¹²: Սակայն

Մարգվանեցու հաջողվում է գլուխ բերել սեփական տպարան, ինչպես ինքն է ասում, «առաւաել քան զլափշտակեալն ի ձեռաց տառապելոյս»: Ահա թե ինչո՞ւ է Մարգվանեցին 1706 թվականին իր տպարանը «նորակերտ» անվանում:

* * *

Մարգվանեցու հրատարակություններն ու սումնասիրելիս, նկատում ենք հայկական գրքի տպագրության արվեստի զարգացման տեսակետից մի կարևոր նորություն: Առաջին անգամ նրա տպագրած գրքերում, հատկապես «Յայսմատուրք»-ում ենք հանդիպում հայկական զարդարվեստի ու ձեռագիր մատյանների ոճով կերտած զարդերի, փորագիր պատկերների, զարդագրերի: Մինչ այդ, Եվրոպայում հրատարակված հայերեն գրքերի զարդերն ու պատկերները ընդօրինակվում էին ուրիշ ժողովուրդների այնտեղ տպագրված գրքերից: Հայ տպագրիչները հազիվ էին հաջողեցնում գլուխ բերել տառերի ծովում առաջաման ու տպագրության գործը: Նրանք կամ գնում էին պատրաստի փորագիր տախտակները և կամ պատկերում էին օտարազգի արվեստագետներին: Այսպես, 1660-ական թվականների ընթացքում Ոսկան երևանցու



Գրիգոր Մարգվանեցու «Յայսմատուրք»-ի ՃՂԴ էջը
(ներքեւում Գր., Գրիգոր անվան փակագրությունը)

11 «Յայսմատուրք», Կ. Պոլիս, տպագր. Գր. Մարգվանեցու, 1706, էջ ԲՃՂԴ:

12 Նույն տեղում:

Հրատարակած Աստուածաշունչ և մյուս գրքերում, այնուհետև՝ 1690-ական և հետագա թվականների Վանանդեցիների հրատարակությունների պատկերների ու զարդերի մեջ մասի հեղինակը ժամանակի հոլանդացի հայտնի փորագրի Կոռնելիուս Վան Սիգեմն էր: Նրա ստորագրությամբ փորագրություններ են հանդիպում նույնիսկ ԺԲ դարում Կոստանդնուպոլսում տպագրված գրքերում: Եվրոպական քաղաքներում հրատարակված գրքերի պատկերների վրա հանդիպում ենք նաև ուրիշ փորագրողների ստորագրությունների: Կան նաև օտարազգի մասնագետների անստորագիր փորագրություններ: Այդ գրքե-

Հայերեն տպագիր գրքերի հայկական փորագրությունների սկզբնավորման ու զարգացման գործում բացառիկ դերը պատկանում է Գրիգոր Մարգվանեցուն: Նրա բոլոր լավագույն հրատարակությունները՝ «Յայսմաւորք»-ը, Ազաթանգեղոսը, Հովհան Ակնեցու «Այբբենարան»-ը, «Տարոնի պատմություն»-ը ձևավորված, լրացված են խորաններով, պատկերներով, զարդերով ու զարդարությամբ հատկապես աշքի է ընկնում «Յայսմաւորք»-ը: Նրա մեջ զետեղված են վեց մեծագիր ու հարուստ բովանդակությամբ պատկերներ, որոնցից մեկը կրկնվում է երկու տեղ (թ և թիվ էջերում):



Գրիգոր Մարգվանեցու 1709 թվականին տպագրած Ազաթանգեղոսի առաջին էջերը

րում եղած հայկական կյանքից առած հատուկենություններն ու զարդերը նույնպես հայ տպագրիչների պատկերով կատարած օտար արվեստագետների գործեր են: Դրանցից է, օրինակ, 1687 թվականին տպագրված «Պարզաբանութիւն սաղմոսաց» գրքի սկզբում զետեղված Ազաթանգեղի նահապետ Գյուլնազարի դիմանկարը: Ժամանակի հայ Խոզայի մի խմբական տիպար է այդ:

Այսպիսով, հայ տպագիր գրքի փորագրության արվեստը ծնունդ է առել Ժէ դարի վերջում և ԺԲ դարի սկզբներում, Կոստանդնուպոլսի հայկական միջավայրում, հայերի ձեռքով: Ճիշտ է, աշխարհագրական իմաստով Կոստանդնուպոլիսը Հայաստանից դուրս էր, բայց այն իրենց հայրենիքի կյանքով ապրող, հայաշատ ու հայ մշակութի մի ծաղկուն օջախ էր:

Բարձրարվեստ, բազմաբովանդակ ու հմուտ աշխատանք է մասնավորապես այս կրկնվող փորագրությունը: Այն բաղկացած է 16 առանձին փոքր պատկերներից: Մեծագիր պատկերներից բացի, գործում կան 24 փոքր պատկերներ ևս: Դրանցից միայն մի-երկուսն են կրկնվում մեկ-երկու տեղ և իրենց ինքնատիպությամբ ու արվեստով դարձյալ բարձրարժեք գործեր են: Այսպիսով, Մարգվանեցու գրքերում հանդիպում ենք ոչ թե ուրիշ գրքերից ընդօրինակված պատկերների ու սրբերի դիմանկարների, այլ այնպիսի նկարների, որոնք արված են հենց տվյալ բնագրի համար, որոնց իմաստը բխում է տվյալ բնագրից: Այսինքն, այն, ինչ գրքում առված է բառերով, նկարիչ, փորագրող արմեստագետը արտահայտել է պատկերների միջոցով:

Աստվածատուր Կոստանդնոլիսեցու հրա-
տարակությունները նույնպես փորագիր
պատկերներով ու զարդերով են, բայց շատ
ավելի պարզունակ ու պահաս արվեստով:
Դրանք կատարված են տարբեր մարդկանց
կողմից և մեծ մասամբ առանց ստորագրու-
թյունների: Նկատվում է, որ Աստվածատուրը
ձգտել է իր հրատարակություններին շքեղ
տեսք տալ, թեև այդ քիչ է հաջողվել նրան:
Մարզվածնեցու հետ համեմատած: Օրինակ,
Աստվածատուրի «Յայսմաւուրք»-ում մեկ
անշուր, առանց փորագրովի անվան, մեծա-
գիր պատկեր կա, այն էլ երկու տեղ կրկնված:
Կան նաև հիսուս փոքր պատկերներ, որոնց
մեծ մասը կրկնվում են բազմաթիվ անգամ:
Նրանցից մեկը վերատպված է 16 ան-
գամ: Փոքր պատկերներից մի քանիսի վրա
հանդիպում են փորագրողների անունների
սկզբի տառերը՝ Գր., այսինքն Գրիգոր և Ղր.,
այսինքն Դրաստամատ (գուցե Դերենիկ):
Մարզվածնեցու բոլոր մեծագիր պատկերների
վրա գտնում ենք փորագրովի անունը, երբեմն
էլ հայրանունն ու զբաղմունքը: Հենց տիտ-
ղոսաթերթի խորանի վրա փորագրված է:
«Ուժե նկարեցեալ ձեռամբ Գրիգորի դպրի»:

Ովեր՝ ի են այս նկարիշ-փորագրողները։
Հայ տպագիր զրբի ձևավորումը, տպա-
տեսակները, զարդերը, պատկերները և ընդ-
հանրապետ տպագրության արվեստը գեռևս
հանգամանորեն չեն ուսումնասիրվել։ Իր
«Հայ գիրը» և տպագրության արվեստը» աշ-
խատության մեջ Գ. Լևոնյանը այդ հարցերը
շնչափում է Հարկանցիրեն։ Խոսելով Մարգ-
վաննեցու և Աստվածատուրի տպագրական
գործունեության մասին, Լևոնյանը վերջինիս
տպագրած գրքերի պատկերների կամ նրանց
հեղինակների մասին նշում է, որ «ծալիկա-
րար» է եղել, այսինքն զարդագրեր ու նախ-
շեր փորագրող, բայց նրա տպագրած գրքերի
պատկերների մասին դարձյալ ոչինչ չի ա-
ռում¹³, իր գրքի Դգիսի վերջում, անդրա-
գառնաւով ԺԷ-ԺԲ զարերի փորագրության
արվեստին, Լևոնյանը գրում է. «Անցյալ զա-
րերում Կ. Պոլսում տպագրված պատկերա-
զարդ հրատարակությունների մեջ հաղիկ մեզ
հաջողվել է գտնել 18-րդ դարի մի քանի փո-
րագրիչների, որոնք իրենց անունը նշել են
կլիշեների մի անկյունում, ինչպես Գր.,
այսինքն Գրիգոր, ՄԿ., այսինքն Մկրտիչ,
ՆշՊ., այսինքն Նահապետ¹⁴, Մինդիկ
Մարգվաննեցու «Յայսմաւուրբ»-ի պատկերնե-
րի վրա ոչ թե Գր., այլ ուղղակի քանդակված
է Գրիգոր Պափիր, երբեմն էլ «Որդի Մկրտչը»



Գրիգոր Մարգվանեցու 1719 թվականին տպագրած
«Պատմութիւն տարօնոյ» գրքի տիտղոսաթերթը

(օրինակ՝ Թէ էջի մհծագիր պատկերի վրա՝ «Գրիգոր որդի Մկրտչի. նկարող և փորող պատկերիս, 1154»): Որ Մկրտչի որդի Գրիգորը ինը Գրիգոր Մարզվանեցին է, երևում է Զձէ էջի զարձերեսի պատկերի ներքեկի աշ և նկյունի փորագիր մակագրությունից. «Աճ՛Ե Նկարեալ և Փարեալ ճեռամբ Գրիգորի ապագրի աեածան դպրիս: Այդ հաստատում են նաև հիշատակարանի հետևյալ տողերը. «Եւ լուս աշացս երեմն նուազիր» և յուշագնայի ի բարակս հայեցողութեանս փորուածոյ պատկերաց»¹⁵: «Ճայսմաւուրք»-ի փոքր պատկերների վրա Մարզվանեցին իր անունը շի դրել: Բացառություն է կազմում ՃԴԴ էջի գեղեցիկ փորագրությունը, որի ներքեկի մասում նշմարվում է Գրիգոր անվան փակագրությունը: Աստվածատուրի «Ճայսմաւուրք»-ի մի քանի փոքր պատկերների վրա ստորագրող Գրիգորի և Գրաստամատի մասին տեղեկություններ ըկան Մարզվանե-

13 Գ. Առնյան, Հիշված աշխատովլումը, էջ 127—
137:

14 Նույն տեղում, էջ 172:

15 «Յայսմաւութեա», Կ. Պոլիս, տպագր. Գր. Մարգ-վանեցու, 1706, էջ Թձկն:

յու պատկերների հետ համեմատած, այս Գրիգորի ու Դրաստամատի պատկերները շատ ավելի հասարակ են: Հավանական է թվում, որ Աստվածատուրի գործերում հանդիպող Գրիգոր ստորագրությամբ պատկերները կամ Գրիգոր Մարգվանեցու՝ փորագրության արվեստի մեջ դեռևս լավ չհմտացած երիտասարդ ժամանակի, գործերն են, որոնք տպարանի հետ անցել են Աստվածատուրին, կամ այս Գրիգորը բոլորովին այլ անձնավորություն է:

Վերոգրյալ փաստերը ցույց են տալիս, որ ԺԷ դարավերջին և ԺԷ դարի առաջին կեսում Կոստանդնուպոլսում գործող երկու նշանա-

վոր տպարանատերերը՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին և մանավանդ Գրիգոր Մարգվանեցին հայ տպագրության արվեստը հասցրին մի նոր բարձրության: Նրանցից մեկը՝ Աստվածատուրը դարձավ իր ժամանակի ամենաբեղմնավոր տպագրիչը, որն իր հրատարակություններում սկսեց զետեղիլ հայ արվեստագետների ձեռքով պատրաստած փորագիր պատկերներ, մյուսը՝ Գրիգոր Մարգվանեցին, մի շարք արժեքավոր գրքերի առաջին հրատարակիչը լինելով, միաժամանակ, հայերեն տպագիր գրերում հայ փորագրության արվեստի պատկերների սկզբնավորողն ու հիմնադիրը եղավ:

